ԿԱՐԾԻՔ

ՎԱՀԱՆ ՍԱՄՎԵԼԻ ԳԱՐԱՔՅԱՆԻ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՈՒԴԻՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ԼՂՀ ՕՐԻՆԱԿՈՎ)» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.03 «ՖԻՆԱՆՍՆԵՐ, ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Շուկայական տնտեսության գոյության կարևորագույն և անվերապահ պայման է սեփականության ձևերի առկայությունը, ինչն էլ դարձավ տնտեսական նոր հարաբերություններն անցման նպատակով տարբեր երկրներում, այդ թվում նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում իրականացվող տնտեսական բարեփոխումների հիմնական ուղղություններից մեկը: Անցման սկզբնական փուլերում, տնտեսական նախկին կապերի խզմամբ, օրենսդրական համապատասխան դաշտի բացակայությամբ, պետական կարգավորման համակարգի անկատարությամբ և մի շարք այլ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով պայմանավորված, հատկապես արտադրական ձեռնարկություններում առաջացան մի շարք հիմնախնդիրներ, որոնց զգալի մասը կապված էր ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարման հետ: Ըստ էության, վերջինիս ապահովմամբ է մեծապես պայմանավորված արտադրական ձեռնարկությունների գործունեության կազմակերպումն ու այդ ուղղությամբ ցանկալի արդյունքների ստացումը: Նշված, ինչպես նաև մի շարք այլ հիմնախնդիրների լուծման գործում կարևոր նշանակություն ունի ֆինանսական աուդիտը, որի արդյունավետ կազմակերպման ու իրականացման խնդիրները և դրանց լուծումները ԼՂՀ տնտեսական զարգացման ժամանակակից փուլում ձեռք են բերել մեծ կարևորություն: Աշխատանքը նվիրված է նշված հիմնահարցերի ուսումնասիրությանը, ինչը խոսում է ատենախոսության թեմայի արդիականության և հրատապության մասին:

Ատենախոսությունն ունի տրամաբանական կառուցվածք, ինչը հնարավորություն է տվել ապահովել դրված խնդիրների լուծման հաջորդականությունը և պահպանել ամբողջական հետազոտության իրականացմանը հատուկ սկզբունքները:

Աշխատանքի **առաջաբանում** ներկայացված է ատենախոսության թեմայի արդիականությունն ու հրատապությունը, դրված է հետազոտության նպատակը և տրված են դրան հասնելու համար լուծման ենթակա խնդիրները:

Ատենախոսության **առաջին գլխում** ուսումնասիրված են ֆինանսական աուդիտի էությունը և նպատակը, արտադրական կազմակերպությունների հաշվետվողականության խնդիրները և աուդիտորական գործունեության իրավական հիմքերը, ինչպես նաև աուդիտորական գործունեության միջազգային փորձը:

Ատենախոսության **երկրորդ գլխում** քննարկված են ֆինանսական աուդիտի կազմակերպման առանձնահատկությունները Արցախի արտադրական կազմակերպություններում, պաշարների հաշվառման խնդիրները, աուդիտի կազմակերպման հիմնահարցերը և պատրաստի արտադրանքի ինքնարժեքի արժեորման ու դրա աուդիտի խնդիրներն ու մոտեցումները:

Ատենախոսության **երրորդ գլխում** մշակվել են աուդիտորական գործունեության կարգավորման մեխանիզմների արդիականացման և ֆինանսական աուդիտի արդյունավետության բարձրացման ուղիները արտադրական կազմակերպություններում:

Ատենախոսությունում իրականացված վերլուծությունները հիմնված են դիտարկվող բնագավառի դասականների. ինչպես նաև ժամանակակից հետազոտողների ուսումնասիրությունների վրա: Աշխատանքում օգտագործված են պաշտոնական շրջանառության մեջ գտնվող նյութեր և տվյալներ, ինչը թույլ է տվել հեղինակին ապահովել աշխատանքում ստացված արդյունքների անհրաժեշտ հիմնավորվածություն և հավաստիություն:

Աշխատանքի հիմնական **գիտական նորույթը** կայանում է նրանում, առաջարկվել են պաշարների աուդիտի ընթացակարգերի հաջորդականություն և կիրառելի փաստաթղթերի շրջանակներ, արտադրապրոցեսում պատրաստի արտադրանքի արտադրության նպատակով կատարվող ծախսումների բաշխման արժևորումը գնահատելու համար հավաստիություն (ապացույցներ) ձեռք բերելու միջոցառումների իրականացման մեթոդական մոտեցումներ, ինչպես նաև Արցախի Հանրապետությունում ձևավորել լայն լիազորություններով օժտված աուդիտորական անկախ մասնագիտական կառույց (ներկայացուցչություն):

Ատենախոսության գիտագործնական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ աշխատանքի արդյունքները կարող են օգտագործվել ԼՂՀ արտադրական կազմակերպությունների կողմից՝ ֆինանսական աուդիտի զարգացմանն ուղղված ծրագրերի մշակման և իրականացման ընթացքում:

Ատենախոսության վերաբերյալ կան դիտողություններ, որոնցից հատկապես կցանկանայինք ընդգծել հետևյալները:

1. Արտադրական ձեռնարկություններում ֆինանսական ռեսուրսների ձևավորման հիմնախնդիրները ուսումնասիրելիս, մեր կարծիքով, հեղինակը բավարար խորությամբ չի անդրադարձել այնպիսի հարցերի, որոնք ուղղակիորեն պայմանավորված են տնտեսական նոր հարաբերություններին անցման դժվարություններով, ինչպես նաև անցած ժամանակահատվածում հանրապետությունում առկա տրանսպորտային և կոմունիկացիոն սահմանափակումներով: Վերջիններս, ակնհայտորեն, ունեցել և առաջիկայում կունենան էական բացասական ազդեցություն կազմակերպությունների ֆինանսական կապիտալի ձևավորման և կառավարման վրա, որը պետք է հաշվի առնվեր ատենախոսի կողմից իրականացված վերլուծությունների ժամանակ:

2. Արտադրական ձեռնարկությունների ֆինանսական կառավարման խնդիրները դիտարկելիս հեղինակի կողմից իրականացված վերլուծությունները, մեր կարծիքով, չեն կարող լինել բնութագրական Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործող բազմաթիվ այլ տնտեսավարող սուբյեկտների համար: Այդ առումով, նպատակահարմար կլիներ խնդրի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար իրականացված վերլուծությունների շրջանակում ընդգրկված լինեին ավելի մեծ թվով ձեռնարկություններ և կազմակերպություններ:

3. Ատենախոսությունում հեղինակն առաջարկում է ապրանքանյութական արժեքների հաշվառման ստուգման արդյունավետությունը բարձրացնելու համար մշակել և ներդնել աուդիտի ընթացակարգեր ու կիրառելի փաստաթղթերի շրջանակ: Միևնույն ժամանակ, դրանցում բացակայում են այնպիսի մոտեցումներ, որոնց անհրաժեշտությունը հատկապես ակնհայտ կդառնա ոչ ստանդարտ իրավիճակներում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողությունները հետապնդում են արտադրական ձեռնարկություններում ֆինանսական աուդիտի բարելավմանը նվիրված հետագա ուսումնասիրությունների ուղղությունների բացահայտման նպատակ: ,

Վ. Գարաքյանի թեկնածուական ատենախոսությունն ունի գիտագործնական կարևոր նշանակություն, իրենից ներկայացնում է ինքնուրույն և ամբողջական հետազոտություն, որում դրված և լուծված են հանրապետության համար հրատապ ու արդիական խնդիրներ:

Հեղինակը հանդես է բերել մասնագիտական ու վերլուծական անհրաժեշտ մակարդակ, ինչի մասին են վկայում բուն ատենախոսությունը և դրանում ստացված արդյունքները: Աշխատանքում մշակված առաջարկությունները և կատարված

եզրահանգումները կարող են օգտագործվել արտադրական ձեռնարկություններում ֆինանսական աուդիտի իրականացման ժամանակ:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Ընդհանուր առմամբ, Վ. Գարաքյանի «Ֆինանսական աուդիտի կազմակերպման հիմնախնդիրները արտադրական ձեռնարկություններում (ԼՂՀ օրինակով)» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է Ը. 00.03- «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ,
տնտեսագիտության դոկտոր
22.04.2020թ.

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պարոն Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
ստորագրությունը հաստատում եմ
Պ. Գ. Թ.
ԵՊՀ գիտական քարտուղար

Լ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

22.04.2020թ.